ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԵԳ-ՋԱՔՈՒԵՍ ԱԳՈՓՅԱՆԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 27.07.2007Թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 4-285 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի, աշխատակարգային նիստում քննելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրած) նախկին 9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190 հոդվածի 1-ին կետի եւ 199 հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ քաղաքացի Գրեգ-Ջաքուես Ագոփյանի դիմումը քննության ընդունելու մասին հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գրեգ-Ջաքուես Ագոփյանը դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ հողային նախկին (ուժը կորցրած) օրենսգրքի 9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190 հոդվածի 1-ին կետի եւ նույն օրենսգրքի 199 հոդվածի 2-րդ կետի դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի եւ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարաններում քննված 2-1756/2004թ., 2-3140/2005թ. եւ 06-616 06-2437 06-2940/2006թ. գործերի շրջանակներում փորձել է պաշտպանել իր սեփականության իրավունքը, սակայն արդյունքում ընդունված դատական ակտերը գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չեն բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: Դիմումում վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 3-րդ կետի դրույթները վերջնական դատական ակտով չեն կիրառվել դիմողի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում նախատեսված է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկվում է **այդ ակտով** իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Մինչդեռ դիմողի կողմից բարձրացվում է այն նորմի սահմանադրականության հարցը, որը վկայակոչված է վճռաբեկ դատարանի աշխատակազմի գրության մեջ: Նկատի ունենալով, որ անհատական դիմումների

հիման վրա իրականացվում է կոնկրետ եւ ոչ թե վերացական սահմանադրական վերահսկողություն, որոնց առանձնահատկությունները հստակ ամրագրված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի գլուխ 10-ում, սահմանադրական դատարանն անհատական դիմումը կարող է քննության ընդունել միայն իրավաբանական ուժը չկորցրած այն օրենքի դրույթի սահմանադրականության հարցով, որը կիրառվել է փվյալ անձի նկատմամբ դատական վերջնական ակտով:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29, 32 հոդվածների եւ 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Գրեգ-Ջաքուես Ազոփյանի դիմումի քննության ընդունումը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 օգոստոսի 2007 թվականի
ՍԴԱՈ -102